# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №55-Լ

«05» 06 2024 թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահե Վարուժանի Ռաֆայելյանին Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի պաշտոնին փոխադրելու և Տաթևիկ Արսենի Սարուխանյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2024 թվականի մայիսի 31-ի՝ համապատասխանաբար՝ N 212-Ա և N 213-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ  ե մ՝**

1. Կատարել Վ.Ռաֆայելյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Տ.Սարուխանյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Գրիգորյան Լիլիթ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Հովսեփյան Սոնա - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ

Առաքելյան Ռուբեն - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Նազարեթյան Արմինե - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

Ղահրամանյան Մարուշ - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար

Մանուկյան Լիաննա - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ

Մանուկյան Անժելա - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությանն աջակցող բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ